

# Ծ Ւ Ա Ծ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ, ՆՈՐԱԼՈՒՐՔ ԵՒ ԶՈՒՄՈՃԱԼԻՔ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՌԲԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑԻՑ.

Բոլոր աշխարհին ուշադրութիւնը այս միջոցին Հռոմի վիճակին, Ասորւց երկրին ու անուանի Միքայէս սեղանաւորին բանտ դրուելուն վրայ է:

Հռոմի վիճակը, այսինքն պատին աշխարհական իշխանութեանը նեղն ընկածը՝ քիչ մը կայէթային պաշարմանը կնմանի. եւ շատ հաւանական է որ մօտ ժամանակներս այն ալ կայէթային պէս առնուի, եւ Խոալիոյ միութիւնը ամբողջանայ: Փարփու մէջ նոր տետրակ մը հրատարակուեր էր այս տարի՝ Գաղղիա, Հռոմ եւ Խոալիա վերնագրով. ասոր իեղինակը Լակէռոնիէր անունով քաղաքագէտ մարդն է, բայց ամէնքն ալ կարծիք կընեն թէ մէջի իմաստները նափուլոն կայսեր թելադրութիւններն են. վասն զի բոլոր ըսածներուն միտքը այս է թէ Խոալիոյ ամենայն անկարգութեանցն ալպատճառ՝ Հռոմն է, ու մինչև որ պապին աշխարհական իշխանութիւնը վլեցուի, Խոալիան հանգստութիւն պիտի չգտնէ:

Այն տետրակին խօսքերէն շատ առնուեցան Հռոմի ու Գաղղիոյ եպիսկոպոսները, եւ Փուամիէի եպիսկոպոսը համարձակեցաւ իրեն մէկ շրջաբերականին մէջ՝ նմանցընել զնափուլոն կայսրը Պոնտացի Պիղատոսին, որ զՔրիստոս Հրէից ձեռքը մատնեց: Գաղղիոյ տէրութիւնն ալ դատաստանի տակ ձգեց այն անխոհեմ եպիսկոպոսը՝ իրեւ գրգուէ ժողովրդեան յապստամբութիւն:

Այն տետրակէն աւելի ազգեցութիւն ըրաւ ամէն տեղ, մանաւանդ յիտափա, նափուլոն իշխանին (որ կայսեր հօրեղբօրորդին է) ծերակուտի խորհրդարանին մէջ խօսած ճառը, պապին աշխարհական իշխանութեանը դէմ: եւ թէպէտ նափուլոն կայսրը իւր Հռոմ կեցող գեսպանին ձեռքովը իմացուց պապին՝ թէ ինքը այս բանիս մէջ հօրեղբօրորդւոյն կարծիքէն չէ, բայց հաւատացող չկայ, եւ ամէն մարդ կսպասէ որ մօտերս Գաղղիացւոց զօրքերը քաշուին ելլեն Հրոմէն: Խոկ Առունի Հռովմայեցիք արդէն սկսեր են կերպով մը իրենց ալ Մագաւոր Տանչնալ Վիկոր Էմմանուէլը, որ հանդիսաւոր կերպով թագաւոր Խոալիոյ հռչակուեցաւ:

Ասորւց երկրին խեղճութիւնները ամենեւին դադրելու պէս չեն երեւար, ոչ Փուատ փաշային ըրած քննութիւնները եւ ոչ եւրոպական յանձնաժողովը կրցան ազատել այն կողմի քրիստոնեաները Տանկաց սպառնալիքներէն եւ Տիրղիներուն վրէթիւնդրութենէն: Գաղղիսն իւր զօրքերը չկրնար հանել Ասորւց երկրէն՝ առանց քրիստոնեաները մէծ վտանգի մէջ ձգելու. Խուսիան ու Բրուսիան ալ այս կարծիքն վրայ են որ պէտք չէ հանէ զանոնք, մանաւանդ թէ պէտք է աւելցընէ. իսկ Անգղիան ու Աւստրիան հակառակ են այս խորհրդին եւ կըսեն թէ

օտար տէրութիւնները Տանկաստանի ներքին կառավարութեանը պէտք չէ խառնուին: Յայտնի բան է որ Անգղիոյ հակառակութեանը պատճառ այս բանիս մէջ՝ իւր շահասիրութիւնն է. վասն զի Տանկի տէրութիւնը ո՞քափ տկարանայ, այնչափ Անգղիոյ ոյժը՝ ազգեցութիւնը արեւելք կաւելնայ: Խոկ Աւստրիոյ վախը այն է որ այսօր Տանկաստանի գործերուն խառնուող տէրութիւնները՝ վաղը իւր գործերուն ալ կիսառնուին, որ Տանկաստանի գործերէն շատ աղէկ մը չեն:

Տանկաստանի դրամական խեղճութեանը նոր ու սոսկալի հարուած մը եղաւ Միքայէս անունով իրեայ հարուատ սեղանաւորին սնանկանան ու բանտ գրուիլը: Գաղղիոյ մէջ ու նաեւ Գաղղիայէն գուրս գրեթէ մէկ մեծ դրամական գործողութիւն մը վկար որ Միքայէս ծեռք առած կամ մէջը մտած չինէր. ուստի 350 միլիոն ֆրանքի պարտք կցուցընէ հիմա, եւ իւր սնանկութեան վնասը խիստ շատ սեղանաւորներու հասաւ:

Աւելի ալ մեծ եղաւ Տանկաստանի սեղանաւորներուն վնասն ու շփոթութիւնը, վասն զի տէրութեան փոխ ստակ տուող Միքայէս պիտի լինէր: Այժմ Միքայէս Մազամի բանտն է, ուր մեծամեծ յանցաւորները կդըրուին, եւ իւր դատաստանը ծածուկ քննուելու վրայ է: Կերենայ թէ տէրութեան մեծամեծներէն ալ շատերուն գլուխը պիտի ցաւի նորա պատճառաւոր. եւ յանուանէ իրեւ Միքայէն գործակից կյիշուին Մոռնի կոմսը, Պարոշ՝ ծերակուտի գահերէցին որդին, Պաշխօքքի՝ նափուլոն կայսեր ազգականը եւ ուրիշ անձննը:

Աւստրիոյ վիճակն ալ օրէ օր գէշնալու վրայ է. իւր տուած ազատութիւններուն վրայ ժողովուրդները կատահութիւն չունին, ինքն ալ ցիտեր թէ ի՞նչ ընէ որ կարենայ Վենետիկը, Մանաստանը, Լիւրիկէն եւ ուրիշնահանգները ծեռքէ չինանել: Մանաստերը ոտք պիտի ելնեն ըստըներ ալ եղան. եւ կերեւի թէ կարիպալտիին կսպասեն:

Ամերիկայի Միացեալ նահանգներէն արդէն եօնը հարաւային նահանգ՝ հինգ միլիոնէն աւելի ժողովրդով՝ զատուեցան ելան բոլորովին հիւմիսային նահանգներուն դաշնակցութենէն, եւ նոր տէրութիւն մը ծեւացան՝ Ամերիկեան հարաւային Գաղղակ ակցութիւն անունով. իրենց համար մայրաքաղաք ըրին Ալապամա նահանգին Մոնկոմէրի քաղաքը, գահերէց ընտրեցին ձէֆերսոն Տէվիս անունով մէկը, եւ նոր սահմանադրութիւն հրատարակեցին: Անդին հիւմիսային նահանգաց նորընտիր Լինքոլն գահերէցն ալ Վոշինկունի մէջ իւր պաշտօնը սկսաւ կատարել, եւ կըսեն թէ միտք եւ յոյս ունի հաշտութիւն եւ միաբանութիւն ընելու հարաւային նահանգաց հետ: